ԲԱՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՏԵՔՍՏԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ Պ. ՌԻԿՅՈՐԻ «ՏԵՔՍՏԻ ՖԵՆՈՄԵՆՈԼՈԳԻԱԿԱՆ ՀԵՐՄԵՆԵՎՏԻԿԱՅԻ» ՀԱՅԵՑԱԿԱՐԳՈՒՄ

Ռոմիկ Քոչարյան
փիլիսոփայական գիտությունների թեկնածու,
Խ. Աբովյանի անվ. ՀՊՄՀ-ի
Սոցիոլոգիայի և սոց. աշխատանքի ամբիոն

Վ. Դիլթայի հերմենևտիկայի հայեցակարգը, որպես «ոգու մասին գիտությունների» համընդհանուր մեթոդաբանություն, ձևակերպվել է ի պատասխան այդ գիտությունների առնչությամբ էպիստեմոլոգիական հարցադրության՝ որպես պատմա-հումանիտար գիտելիքի հիմնավորման և այսկերպ՝ հումանիտար ու նաև սոցիալական գիտությունները որպես գիտություն կարգող մեթոդաբանական խնդիր և տեսություն: Հ.-Գ. Գադամերը մերժելով հերմենևտիկայի մեթոդաբանական ձևակերպումը, իր փիլիսոփայական հերմենևտիկան կյանքի է կոչում զոյութենական հենադրությամբ: Եվ սակայն, փիլիսոփայական հերմենևտիկայի՝ Գադամերյան հայեցակարգին բնորոշ է **սահմանափակ ունիվերսալություն,** ուստի և այն նույնպես **«բնութագրելի չէ որպես լիովին ամբողջական փիլիսոփայություն»** [1, էջ 215]: Պ. Ռիկյորը Մ. Հայդեգերի և Հ.-Գ. Գադամերի տեսություններից ժառանգելով «իսկության» հասկացությունը, ի տարբերություն Գադամերի, այն ոչ թե հակադրում, այլ՝ համատեղում է այլ սցիենտիստական փիլիսոփայական տեսություններում կիրառվող «մեթոդ» հասկացության հետ, հերմենևտիկայի ներսում անհրաժեշտորեն իրագործելով որոշ փոփոխություններ: Արդյունքում հերմենևտիկան իրենում համատեղում է հասկացման սկզբունքային նպատակ հանդիսացող **«իսկության»** զոյութենական հասկացությունը **մեկնության** ուղի հանդիսացող **«մեթոդ»** էպիստեմոլոգիական հասկացության հետ:

Փիլիսոփայական հերմենևտիկայի ունիվերսալ և ամբողջական հայեցակարգի նպատակամետ Ռիկյորի մտորումները ծավալվում են «տեքստ» հիմնախնդրի շուրջ: Տեքստի՝ նրա վերլուծությանը ծանոթացումն սկզ-

բունքորեն անհրաժեշտ է հերմենևտիկայի նրա հայեցակարգի հասկացման համար: Իսկ դրա համար անհրաժեշտ է նախ վերահասու լինել բանախոսության (դիսկուրսի) ֆենոմենի ու հասկացության նրա մեկնաբանությանը [2, էջ 132-134, 3, էջ 197-203]: Ըստ Ռիկյորի, բանախոսությունը երկբևեռ իրողություն է՝ իրադարձություն և նշանակություն: Բանախոսությունն իրենից ներկայացնում է իրադարձության և նշանակության երկմիասնություն: «Բանախոսությունը տեղի է ունենում որպես իրադարձություն. ինչ-որ բան է պատահում, երբ ինչ-որ մեկը խոսում է» [2, էջ 133]: Որո՞նք են բանախոսություն-իրադարձությունը կազմավորող առանձնահատկությունները.

2. բանախոսությունն իրականանում է ժամանակի ընթացքում և ներկայում՝ ի տարբերություն ներունակ (վիրտուալ) և ժամանակից դուրս գտնվող լեզվի համակարգի:

3. բանախոսությունը վերաբերում է իր հեղինակին (խոսողին) ցուցիչների շարքի (օր. անձնական դերանունների) միջոցով: Այս առումով՝ բանախոսությունն ինքնամատնանշող է, ցույց է տալիս, թե կոնկրետորեն ով է խոսողը: Բանախոսության կոնկրետ իրադարձային բնույթն այստեղ կապված է խոսողի կոնկրետության հետ: Խոսողի որոշակի մի որ, տվյալ կոնկրետ անձը, այլ ոչ մի ոմն (հնարավոր ինչ-որ մեկը) լինելով՝ բանախոսությունը ձեռք է բերում իրադարձային, այսինքն՝ առանձին որոշակի, բայց և անցողիկ դեպք լինելու բնույթ:

4. բանախոսությունը միշտ ինչ-որ որոշակի բանի վերաբերյալ է: Այն միշտ վերաբերում է աշխարհին, որնիցե կոնկրետ իրողությանը, նկարագրելով, արտահայտելով ու ներկայացնելով այն: Իրադարձությունն այստեղ խոսքում որոշակի ինչ-որ բանի կամ ավելի ընդհանուր կերպով ասված՝ աշխարհի ի հայտ գալն է: Ի տարբերություն բանախոսության, լեզուն զուրկ է ինչպես ժամանակից (կոնկրետ ժամանակային հատվածում տնելու հատկությունից) և հեղինակից, այնպես էլ՝ աշխարհից, քանզի նրա նշանները կապվում են լոկ այլ նշանների հետ նույն լեզվահամակարգի ներսում:

5. բանախոսությունում բոլոր լուրերը փոխանակվում են՝ ի տարբերություն լեզվի, որը հաղորդակցության լոկ նախապայմանն է: Այսպիսով, բանախոսությունն ունի նաև խոսակից, որին և հասցեագրվում է: Իրա-

դարձությունն այստեղ լուրերի փոխանակման ժամանակային ֆենոմենն է, երկխոսության իրականացումը, քանզի առկա է որոշակի խոսակից, և այդ երկխոսությունը կարող է սկսվել, շարունակվել ու ընդհատվել և ավելին՝ գուցե իսկ ավարտվել: Համեմատության համար նշենք, որ սա անիրականանալի է տեքստի դեպքում:

Բացահայտելով «իրադարձություն և նշանակություն» դիալեկտիկայի առաջին բևեռը՝ Ռիկյորը երկրորդի կապակցությամբ նկատում է, որ «ողջ բանախոսությունն իրագործվելով որպես իրադարձություն՝ հասկացվում է իբրև նշանակություն» [2, էջ 134, 199]: Հասկացման նշանակետը, այն, ինչը ձգտում ենք հասկանալ, ոչ թե իր բնույթով անցողիկ իրադարձությունն է որպես այդպիսին, այլ՝ նշանակությունը, որը մնայուն է [2, էջ 133]: Հանձինս բանախոսության նշանակության կամ «ասման» noema-ի (մտքի կամ ասվողի բովանդակության), Ռիկյորը նկատի ունի ինտենցիոնալ էքստերիորիզացիայի բոլոր կողմերն ու մակարդակները, այսինքն՝ ներքինի, նույնն է թե՝ **ասելիքի**, որպես արտաքին, նույնն է թե՝ հենց **ասված**, դարձող այն բոլոր տարրերը, որոնք այս կամ այն չափով, սակայն սկզբունքորեն հնարավոր է արտահայտել: Այս կապակցությամբ նա, հիշատակելով Օստինի և Սյորլի «խոսքի ակտերի» տեսությունը, ցուցադրում է խոսքի ակտի երեք մակարդակների ասական (locutionary), ոչ-ասական կամ հենց ասակից (illocutionary) և առ-ասական (perlocutionary) [4], էքստերիորիզացիայի ձևերը:

- **Ասականի** արտաքին դրսևորում ստացած լինելության ձևը բուն ասույթն է: Որպես խոսքի մեջ հնչած հենց տվյալ որոշակի ասույթ, այն կարող է նույնորոշվել և կրկնորոշվել: Նախադասությունն արտաբերվելով և դառնալով ասույթ, ընդունակ է հաղորդվել այլոց՝ իր այդ որոշակի, այսինքն՝ նույնորոշելի և կրկնորոշելի նշանակությամբ:
- **Ասակից** գործողությունն արտաքին գոյություն է ստանում եղանակավորման, շարժուձևի, ժեստերի և այլ միջոցներով, որոնք երան նույնպես հնարավորություն են տալիս նույնորոշվել կամ կրկնորոշվել, ուստի և հաղորդվել այլոց իր որոշակի նշանակությամբ:
- **Առ-ասական** գործողությունը խոսողի՝ ասելու ներազդեցությունն է խոսակցի վրա (օր. ոգևորություն, սփոփություն, վախ և այլն), մի բան, որ

ամենից դժվար է ամրագրել քերականական այս կամ այն արտահայտչամիջոցներով:

Այս երեք մակարդակներն ունեն իրենց արտահայտման շատ կամ քիչ միջոցները, որոնք էլ հնարավորություն են ընձեռում մեզ՝ նրանց նույնորոշել կամ կրկնորոշել: Խոսքն այստեղ արտահայտչամիջոցների և բուն ասելիքի կապի մասին է, և հենց այս պատճառով էր Ռիկյորն ասում՝ «ինտենցիոնալ էքստերիորիզացիա»: Ասելիքը կրանքի է կոչում իրեն առավել չափով համապատասխան արտահայտչամիջոցը, և դրանով ամրագրումն է, որ հնարավորություն տալիս ասելիք-նշանակությունը նույնորոշել կամ կրկնորոշել: Նկարագրված այս կերպավորությամբ է Ռիկյորը հասկանում նշանակությունը՝ ինտենցիոնալ էքստերիորիզացիայի այն բոլոր կողմերն ու մակարդակները, որ և կարող են ճանաչվել և վերաճանաչվել որպես նույնը [2, էջ 135-136]: Բանախոսության հատկանիշների բացորոշումն օգնում է որոշարկել տեքստի հատկանիշները: Ըստ Ռիկյորի՝ տեքստը ամրագրումն է այն բանի, ինչը ենթակա է անհետացման: Բանախոսությունն իր իրադարձային բնույթով ենթակա լինելով անհետացման, հենց այն է, ինչն անհրաժեշտաբար կարիք ունի արձանագրման: Թվում է, թե տեքստի առանձնահատկությունն իր մեջ պետք է ներառի բանախոսության հատկանիշները, և, սակայն, տեքստը սկզբունքորեն տարբերվում է բանախոսությունից:

1. Տեքստում արձանագրվում է ոչ թե բանախոսություն-իրադարձությունը՝ անցողիկ իր բնությամբ, այլ՝ նրա նշանակությունը, այսինքն՝ բանախոսություն-նշանակությունը, ասվածը, կամ որ նույնն է՝ ասման նոեման:

2. Արձանագրվելով՝ տեքստը ձեռք է բերում հեղինակից անկախություն: Տեքստի նշանակությունը հարկ է տարբերել հեղինակի նկատառումից կամ իմաստավորումից:

3. Ի տարբերություն բանախոսության, որը որոշակի բանի կամ աշխարհի մասին է, տեքստն արտաքին աշխարհին անմիջականորեն, ուղղակիորեն չի վերաբերում: Նույն ձևով, ինչպես տեքստն ազատում է իր նշանակությունը հեղինակի նկատառումից, այնպես և ազատում է իր վերաբերությունը մատնանշական (ostensive) վերաբերության կապանք-

ներից: Տեքստը պատկերելով ու բացահայտելով՝ վերաբերում է մի աշխարհի, որը Ռիկյորն անվանում է «երկի աշխարհ»:

4. Ի տարբերություն բանախոսության, որն ունի կոնկրետ ու որոշակիորեն առկա խոսակից, հասցեատեր, քանզի դեմուդեմ ֆենոմեն է, տեքստը զուրկ է, իսկ ավելի ճշգրիտ՝ ազատ է այդ կերպով առկա, ուստի և մատնանշելի հասցեատիրոջից [3, էջ 198-203]:

Այս բոլոր հատկանիշները միասին կազմում են տեքստ լինելու չափանիշը: Հեմենևտիկայի առարկայական տիրույթը սահմանելով տեքստի ֆենոմենով՝ Ռիկյորը շրջանցում է Գադամերի «գործող պատմական գիտակցության»՝ ավանդույթի կառուցվածքի օրինակով կազմավորվելու մոդուսի վերաբերյալ տեսակետը, որը վիճելի էր «քննադատական զաղափարախոսության» համար և *պատմականությունը* (պատմության գոյության առանձնահատկությունը) բացորոշում է տեքստի ֆենոմենի շրջանակներում: Ինչպե՞ս: Տեքստը պատմողական է, և պատմայինի ֆենոմենն իրագործված է նրա հյուսվածքում, նրա կառուցավորման մեջ: Տեքստը նշանակալի է և պատմում ու ի հայտ է բերում պատմվող նշանակությունն այնպես, ինչպես և լեզուն է խոսում և խոսմամբ՝ ի հայտ բերում իրենում և-կամ իրենով «ասվող» նշանակությունը:

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Քոչարյան Ռ., Հանս-Գեորգ Գադամերի փիլիսոփայական հերմենևտիկան, Եր., 2006:
2. Ricoeur P., The hermeneutical function of distanciation - Hermeneutics and the human Sciences, Cambridge, 1982., 131-144.
3. Ricoeur P., The model of the text: meaningful action considered as a text – distanciation – Hermeneutics and the human Sciences, Cambridge, 1982. 197-221:
4. Новое в зарубежной лингвистике, XVII, М., 1986.